



ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՁԱԿԱՆ ՍՈՒՐՔԵՐ*

Գլուխ երրորդ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Ավետարանական սուրբերու այս երրորդ խումբին մեջ պիտի առնենք այն դեմքերը, որոնք նախապես հիշված երկու խումբերու մեջ չեն մտներ: Ասոնց հետ պիտի միացնենք նաև Գործք Առաքելոցի այն սուրբերը, որոնք Պողոս առաքյալի ԳՈՐԾԱԿԻՅ ԿԱՄ ԱՇԱԿԵՐՏ ՉԵՆ: Այս վերջինները պիտի կազմեն չորրորդ և հետին խումբը Նոր Կտակարանի սուրբերուն:

«Աշակերտ» բառը Նոր Կտակարանի մեջ ընդհանրապես կգործածվի Հիսուսի բոլոր հետևողներուն համար: Երկուտասան Առաքյալները նույնքան հաճախ կկոչվին նաև «աշակերտներ»: Առաքյալներու քարոզությանը քրիստոնեությունը ընդունողներն ալ կոչվեցան «աշակերտներ»: Մենք այս բառը պիտի գործածենք առ հասարակ անոնց համար, որոնք ուղղակի կամ անուղղակի

շփում ունեցած են Քրիստոսի հետ և ավետարանական քարոզություն կատարած կամ Քրիստոսի ծառայություն մը մատուցած են:

22. Յոթանասուներկու աշակերտներ

Բացի տասներկու առաքյալներեն Հիսուս ընտրեց նաև 72 կամ յոթանասուն աշակերտներ: Ասոնք ալ զույգ-զույգ դրկեց Հրեաստանի զանազան կողմերը Ավետարանը քարոզելու և թծկություններ կատարելու համար (Ղուկ. Ժ 1—20): Ավետարանի մեջ այս խումբին պատկանողներն ոչ մեկին անունը տրված է. մենք ալ փորձը պիտի չընենք հավանական ենթադրություններուն վրա հիմնվելով անուններ հիշելու: Ասոնք այսպես հավաքաբար տոնացույցի անցած են, հավանաբար Հիսուսի կողմն կատարված հետևյալ հավաստումին վրա: Ասոնք երբ քարոզութենն վերադարձան մեծ ուրախությամբ ըսին իրենց վարդապետին. «Տեր, դեր ալ կհնազանդին մեզի քու անունովդ»: Հիսուս սրտախառնեց որ անոր համար չէ որ պետք էր ուրախանալին. «Այլ, ուրախացեք որ ձեր անունները գրված են երկինքի մեջ» (Ղկ. Ժ 20): Իրա-

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № 8 է—Ժ-ից:

կան սրբության հավաստիքը արդարև այդ իսկ է. այսինքն վատահ ըլլալ, որ արժանացած է ինքն ալ մաս կազմելու այն հավերժական ընկերության, որ «Երկինքին մեջ է»:

Յոթանասուներկուքին և Տասներկուքին քարոզչական գործունեությանց մեջ տարբերություն գրեթե չկա: Երկուքին ալ գրեթե մույն իշխանությունը կտրվի Քրիստոսի կողմն: Օրինակ, Հիսուս Տասներկուքին կուտա «Ձորություն և իշխանություն հաղթահարելու բոլոր դեերը և բժշկելու հիվանդությունները» (Ղկ. Թ 1):

Իսկ Յոթանասուներկուքին կըսեն. «Որ քաղաքը որ մտնե՞ք... բժշկեցեք անոնց հիվանդությունները» (Ղկ. Ժ 9): Ու երբ ասոնք կվերադառնան իրենց քարոզութենեն, ինչպես տեսանք վերև, ըսին. «Դեներ ալ կհնազանդին մեզի»:

Երկու խումբերուն քարոզության նյութն ալ մույնն է. «քարոզել Աստուծո Արքայությունը»: Թե քարոզության ինչպես պիտի երթային, կամ մարդոց ինչպես պիտի մոտենային, երկու խումբերուն ալ գրեթե մույն պատկերները կուտա Հիսուս: Նույն երեւոյթը կըշմարտի մեր շարականներուն մեջ: Թե՛ն երկու խումբերուն համար զատ-զատ շարականներ հորինված են, բայց անոնք գրեթե մույն ոգին ունին: Օրինակ՝ Յոթանասուներկուքներն ալ կկոչվին «Առաքյալներ» ու այս վերջիններու շարականներուն մեջ կան բազմաթիվ ակնարկություններ, որոնք բացահայտորեն կվերաբերին Տասներկուքին: Այնպես, որ ըստ երևույթին այս երկուքը մեկը մյուսը լրացնող քարոզչական խումբեր են, քան թե երկու տարբեր կարգեր. երկուքն ալ կազմված ու ղրկված են, այսինքն «առաքված» են, մեկ և մույն նպատակի համար: Հավանական միակ տարբերությունը այն ըլլալ կթվի, որ Տասներկուքը ավելի մնայուն, ավելի որոշ խումբ մը եղած է, որ որքան ատեն որ քարոզությամբ չեն զբաղած, միշտ Քրիստոսի հետ կըքաղաքային. իսկ Յոթանասնից խումբը հավանաբար ավելի առաձգական եղած է, այսինքն, կրնային ավելալ կամ պակսիլ. այսօրվան կարտիստներու կարգին պես. որ թե՛ն պետք է ըլլա թիվով յոթանասուն, բայց քիչ անգամ այդ թիվի վրա կմնա:

Այս երկու խումբերուն—Տասներկուքին և Յոթանասուներկուքին— խորհրդանշական նախատիպերը նկատված են այս տասներկու աղբյուրները և Յոթանասուն կամ Յոթանասուներկու արմավենիները, որոնց հանդիպեցան Իսրայելացիները, անապատի իրենց թափառումներու ընթացքին (Ելք. ԺԵ 27) և ուր բանակեցան:

Յոթանասուներկուքը, Բեթլեհեմի Մա-

նուկներեն հետո երկրորդ խումբ է սրբոց, որոնց անունները Աստուծո միայն հայտնի է, և որոնց նման շատ մը ուրիշ խումբերու ալ պիտի հանդիպինք հառաչիկային:

Յոթանասնից հիշատակը կտոնախմբենք Խաչի չորրորդ կիրակիին նախընթաց 2ր. օրը: Հուլյնք՝ հնր. 4: Լատինք՝ չունին:

23. Հովսեփ Արիմաթացի

Ավետարաններու մեջ այս պատմական անձնավորության մասին ըսվածները համարելով կունենանք հետևյալ պատկերը: «Հարուստ մարդ մը. պարկեշտ, բարեգործ և արդար անձնավորություն մը. Հիսուսի ծածուկ աշակերտ, որ Աստուծո արքայության ակնկալությունը ուներ» (Մատթ. ԻԵ 57—58, Մրկ. ԺԵ 42—43, Ղկ. 50—52, Հովհ. ԺԹ 38): Ս. Գրքի մեր թարգմանության մեջ կոչված է նաև «ՆԱՆՍԱՐԱՐ». որ ուրիշ թարգմանություններ վերածեր են իբրև «ԽՈՐՀՐԴԱԿԱՆ», «ԺՈՂՈՎԱԿԱՆ», այսինքն անդամ Հրեից Գերագույն Ժողովին, Սենատորիոնին: Ըստ այս ժուժկալ տղվայներու, Հովսեփ կներկայանա որպես ազնվական մը թե՛ նյութական կացությամբ, թե՛ ընկերային դիրքով և թե՛ հոգիով: Հովսեփի առաջինն է այն սակավաթիվ «մեծատուն»-ներեն, որոնք ծածուկ կամ հայտնի կերպով աշակերտած են Հիսուսի և իրենց դիրքը և դրամը ի սպաս դրած են քրիստոնեական դատի տարածման և հաջողության:

Հովսեփ երբ իմացավ, որ Հիսուս արդեն իսկ մահացած է խաչին վրա, և գիտնալով թե ըստ իրենց օրենքին այդ օր խաչին վրա պիտի չմնար, համարձակությունը ունեցավ մոտենալու Պիղատոսին և խնդրելու Հիսուսի մարմինը անձամբ թաղելու համար զայն. Պիղատոս շնորհեց Հիսուսի մարմինը: Հովսեփ իր այս արարքով գործնականապես հաստատեց որ արդարև «բարեգործ և արդար» մարդ մըն էր. որովհետև անտեր մեռյալի մը տեր կանգնիլ ու անոր թաղում տալը մեծագույն բարեգործություններեն կնկատվեր հրեից մեջ:

Իսկ համարձակությունը և քաջությունը արդար մարդու հատկանիշ է: Անարդար մարդը թե՛ն կրնա հանդուգն կամ աներես ըլլալ, բայց ոչ քաջ ու համարձակ, այս բաներուն ազնվական և իրական իմաստով: Հովսեփի այս արարքը ավելի կմեծնա և ավելի արժեք կստանա երբ անդրադառնանք, որ ամենքեն լքված մեռյալի մը պետությունեն և իր ազգի բարձրագույն իշխանությունեն դատապարտված «հանցավորի» մը մարմինին տեր կուգե ըլլալ, անոր պատվավոր թաղում մը տալու համար: Հովսեփ

լավ գիտեր որ իր այս արարքով առնվազն իր պաշտոնակիցներուն գայությունը և թըշնամանքը իր վրա պիտի հրավիրեր: Երկրորդ նկատելի պարագան այն է, որ Հիսուսի անփառունակ վախճանեն հետո ալ տակալին իր հարգանքը և համակրանքը չէ դադարեցուցած անոր հանդեպ, և կուգե իր բարեկամական վերջին պարտականությունը կատարել երիտասարդ Վարդապետի նկատմամբ, որուն համար անկեղծ սեր և համարում ունեցած էր: Սա արդեն փաստ մըն է իսկական մեծության և նկարագրի ազնվության. որով օժտված էր Հովսեփ:

Հիսուսի պատվավոր թաղում մը տալով, Հովսեփ գործնականապես կհաստատուե Ավետարաններուն ըսածը. «Սա միաբանած չէր իր պաշտոնակիցներուն խորհուրդներուն և գործերուն հետ»: Որքան ալ ավետարանիչներեն մեկը իր աշակերտած ըլլալը «ի ծածուկ» կնկատուե, քայց Հովսեփ Պիղատոսին ներկայանալով և իր վարդապետին մարմինը ուզելով կհաստատուե, որ հարկը պահանջած պարագային, չէր բաշվեր հրապարակ իջնելէն:

Ըստ երևույթին Հովսեփ ավետարանիչ մը կամ բարոգիչ մը չէր Աստուծո Արքայության. քայց ոգևոր ակնկալող մըն էր այդ թագավորության երկրի վրա տիրապետելուն և անոր անձամբ մաս կազմելուն: Ինք այդ արքայությունը գտած ըլլալ կարծած էր Գալիլիացի Վարդապետին վճիտ և հեղինակավոր բարոգությանց մեջ, որուն հավատարիմ կուգե մնալ մինչև իսկ Քարոզչի մահէն հետո:

Հարատությունը և ընկերային բարձր դիրքը հաճախ աչքսերիչ ույծ մը ունին իրենց մեջ, առ հասարակ ենթական մեծամիտ, սննդարտական, նյութապաշտ և եսակեղծ խլլակի մը կվերածեն: Պետք է ունենալ այդ ույծեն ավելի մեծ գորություն մը դիրքը և դրամը մարդկային ազնվական նպատակներու ծառայեցնելու համար, քան անոնց ծառան դառնալու:

Միտքարական է տեսնել Հովսեփի պես ազնվական հոգիներ, որոնք չեն ավրված նյութի և փառքի աչքսերիչ ազդեցությամբ: Հետաքրքրական և նույնքան սրտապնդիչ է անդրադառնալ որ նախապես հիշված իր երկու անվանակիցներն ալ—Հովսեփ Գեղեցիկը և «Աստվածահայր» Հովսեփը—հսկայական աշխարհիկ կամ հոգևոր բարձրագույն պատիվներու արժանացած ըլլալուն՝ մնացած են անաղարտ:

Հովսեփ Արիմաթացի արժանացալ անփոխարինելի պատիվին Հիսուսի աստվածային մարմինը անձամբ վար առնելու խաչեն և թաղելու իր ընտանիքին համար պատրաստած նոր գերեզմանին մեջ: Այս

երջանիկ և սրբազան պարտականությունը կատարելէն հետո այլևս չի հիշվիր Նոր կտակարանի մեջ: Ուշ միջնադարյան ավանդություն մը զինք կտանի մինչև Անգլիա այնտեղ շինելու Անգլիո առաջին եկեղեցին: Նույն ավանդությունը կրսե, որ Հովսեփ իր հետը տարած է նաև այն սկիհը, զոր Հիսուս գործածեց վերջին ընթրիքին, Հաղորդության ս. Խորհուրդը հաստատելու ատեն: Այս ս. Սկիհը ապա կորսվեցաւ, քայց մնաց ավանդությունը, թե պիտի գտնվի ամենէն առաքինի ասպետին կողմէ: Ուստի այս պատիվին արժանանալու համար միջնադարյան ասպետներ աշխատած են զիրար գերազանցել առաքնությանց մեջ: Հովսեփի գերեզմանը մինչև օրս կցուցվի Երուսաղեմի Փրկչական գերեզմանի մոտիկը մատրան մը մեջ, որ հայոց կաթողիկոսի: Մենք կհիշատակենք զայն Խաչի Զ կիրակիի Բշ. օրը. հուլիսի 31: Լատինք՝ մարտ 17:

Նկատելի պարագա մըն է, որ Նիկողիմոս ալ թեև օգնական եղաւ Արիմաթացիին Հիսուսի թաղման մեջ, սակայն իր անունը չենք գտներ եկեղեցիի տոնացույցին մեջ:

24, 25, 26. Ղազարոս, Մարթա և Մարիամ

Եղբայր և քույրեր են ասոնք, որոնց նրկատմամբ Հիսուս ունեցած է մասնավոր սեր և բարեկամություն: Ամեն անգամ, որ Հիսուս Երուսաղեմ զար, առհասարակ կիջաններ ասոնց տունը, որ կգտնվեր Երուսաղեմի մոտիկ Բեթանիա գյուղը, Ձիթենյաց սարի հարավ-արեւելյան լանջքին:

Հովհաննէսի Ավետարանի մեջ ականատեսի մը մանրամասնությամբ կպատմվի Ղազարոսի հիվանդանալը, մահը, քույրերուն անձնությունը և վիշտը, և ի վերջո հարությունը Հիսուսի ձեռամբ (Հովհ. ԺԱ 1—44): Իր հարությունէն հետո Ղազարոսի մասին ոչ մեկ տվյալ ունինք, քացի այն հավաստումն թե հրեաներ երբ կորոշեն Հիսուսը մեռցնել՝ կվճեն սպանել նաև Ղազարոսը, քանի որ անոր հարությունը մեծապես կնպաստէր Հիսուսի համբալին և ժողովրդականության տարածման: Իրենց որոշումը գործադրեցին կամ ոչ՝ նաև Ղազարոսին վրա, ոչ մեկ ակնարկություն կա Ավետարաններու մեջ:

Եղբորմե մը և երկու քույրեր բաղկացած այս տունը կառավարողը հայտնապես երեց քույրը Մարթան է, գործունյա, աշխատասեր և ծրագրույի կին մը, որուն մասին Ավետարանը հետևյալ դրվագն ունի. «Օրին մեկը Հիսուս գյուղ մը մտաւ. Մարթա անու-

նով կին մը ընդունեց զայն իր տան մեջ: Մարթա ուներ քույր մը՝ անունը Մարիամ, որ եկավ ու նստավ Հիսուսի ոտքերուն քով և մտիկ կըներ Անոր խոսքերուն: Մարթա զբաղված էր շատ մը գործերով. եկավ-կեցավ Հիսուսի առջև ու ըսավ. Տեր, հոգի անգամ չէ, որ քույրս առանձին ձգեց զիս, ուստի ըսե իրեն, որ օգնե ինձի: Հիսուս պատասխանեց. Մարթա, Մարթա, դուն անձկության մատնված ես և շատ մը գործերով զբաղված ես. սակայն կարևորը մեկ բան մըն է միայն.—Աստուծո խոսքը լսել.— Մարիամ ընտրած է լավագույն բաժինը որ պիտի չառնվի իրմե» (Ղկ. Ժ 38—42):

Ավետարանական այս հատվածին հետևեցնելով՝ Մարթա նկատված է գործոն քրիստոնյայի տիպարը. իսկ Մարիամ՝ Աստուծո խոսքը ունկնդրելու նվիրված բարեպաշտ և աղոթասեր հավատացյալի տիպարը:

Այս երեքին մեջ ամենեն բախտավորը Մարիամ եղավ, ոչ միայն «Լավագույն բաժինը» ընտրելուն՝ այլ նաև լավագույն ծառայությունը մատուցած ըլլալուն համար Բրիստոսին: Իր եղբոր հարությունեն հետո Մարիամ երջանկությունը ունեցավ Հիսուսը օժեղու թանկարժեք յուղով մը: Թեև իր օժման շարժառիթը երախտագիտական զգացումն էր, բայց Հիսուս անոր տված ավելի բարձր նշանակություն մը, երբ ոմանք քրնդադարձեցին այս ազնվական արարքը իրեն «վատնում»: Հիսուս ըսավ. Ինչո՞ւ կենդեք զայն, լավ գործ մը ըրավ ինձի համար... հառաջագույն օժեց մարմինս ի նշան պատանքի: Ծմարիտ կըսես ձեզի, աշխարհի որ անկյունն ալ քարոզվի Ավետարանը, անոր ըրածն ալ պիտի խոսվի ի հիշատակ իրեն» (Մրկ. ԺԴ 8—9):

Միայն է Ղազարոսի քույրը այս Մարիամը նույնացնել Մագդաղենացի Մարիամին՝ կամ այն անանուն մեղավորուհիին հետ, որ նույնպես օժեց Հիսուսը, ինչպես երբեմն փորձած են ընել կաթոլիկ շրջանակներու մեջ: Երեքը տարբեր անձեր են:

Ավանդություն մը Ղազարոսը և իր քույրերը դրկված կնկատե Կիսրոս և այնտեղ վրաձաճան. իսկ ուրիշ ավանդություն մը կըսե թե անոնք գացած են Մարսիլիա և այնտեղ վախճանած: Իսկ այն գերեզմանը, ուրկե Հիսուս դուրս կանչեց չորս օրվան մեղյալ Ղազարոսը, մինչև օրս ցույց կտրվի ստորերկրյա տեղ մը իր գլուղին մեջ, ի Բեթանիա, որ այսօր իսլամական խեղճուկ ավան մըն է, մեկ երկու փառավոր եկեղեցիներով, հինգն և ևնորեն:

Մենք կտունենք զանոնք վերոհիշյալ Արեմաթացիին հետ: Հույ՞նք՝ երեքը անջատաբար կտունեն. Ղազարո՞ւ. Ծաղկազարո՞ղի

ճախընթաց օրը, մեզի պես, Մարթան հնր. 4-ին. Մարիամը՝ հնր. 16-ին: Լատինք երեքը միասին դեկտ. 17-ին:

27. Ղուկիանոս հարյուրապետ

Թեև տոնացույցին և մեր օրացույցերուն մեջ գրված է Ղուկիանոս—կամ մինչև իսկ կարգ մը պարագաներուն Խունկիանոս—բայց շիտակ ձևն է Ղուկիանոս: Այս անունը թեև չի հիշվիր Ավետարաններուն մեջ, բայց անձը ներկա է անոր էջերուն մեջ, որովհետև ավանդությունը այս անունով կճանչնա այն հարյուրապետը, որ հրկեց Հիսուսի խաչելության գործողության:

Ղուկիանոս ականջալուր եղած էր Հիսուսի բոլոր այն խոսքերուն գորս արտասանած էր Ան խաչի ճամբուն վրա և խաչափայտին վրայեն: Ու եկած էր այն եզրակացության, որ Հիսուս Նազովրեցին ոչ միայն ոճրագործ մը չէր այլ նաև անսովոր մարդ մըն էր: Հիսուսի մահվան հաջորդող հրաշալի երևույթները—արևի խավարումը, երկրաշարժը ևն.—խորապես տպավորեցին այս անաչառ և անկողմնակալ մարդը, որ ի վերջո ինքնաբերաբար հայտարարեց «Արդարև այս մարդը արդար էր» (Ղկ. ԻԳ 47). կամ «Այս մարդը Աստուծո Որդի էր» (Մատթ. ԻԷ 34):

Հին ավանդություն մը կհաստատե, որ այս հարյուրապետը և իր ընկերները ի վերջո քրիստոնյա եղած և մկրտված են և քացած են իրենց հայրենիքը Կապադովկիա—այսօրվան Կեսարիո. անհանգը—և քրիստոնեական քարոզության նվիրված են, և այդ պատճառով ալ անհատակված են:

Յոթանասուներկուքեն հետո մինչև այստեղ հիշված բոլոր սուրբերը միասնաբար կտունենք Խաչի վեցերորդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

28, 29, 30, 31. Յուդաբեր կիներ

Մարիամ Մագդաղենացի, Մարիամ Կղեովպա, Սողոմե, Հովհաննա և ուրիշներ

Հիսուսի քարոզության ընթացքին՝ իրեն կհետևին ոչ միայն առաքյալներ և աշակերտներ, այլ նաև կարգ մը կիներ: Ասոնց գլխավոր գործն էր Հիսուսի և իր հետևորդներուն օգնել նյութական ծառայությամբ: Ավետարանի բացատրությամբ՝ «Ասոնք Հիսուսի կծառայեին իրենց ինչքերով»: Առ հասարակ ունևոր և երախտալիցյալ պատկական կիներ են, որոնցմե ոմանք «Բժշկված էին չար դևերն և հիվանդություններն»: Ասոնց մեծ մասը հետևեցան Հիսուսի վերջին ու երկայն ճամբոր-

դուրսան, Գալիլիայեն դեպի Երուսաղեմ, որ ականատեն եղան Ավագ շաբթվան դեպքերուն, հատկապես Անոր Խաչելության և թաղման. ի վերջո ասոնք եղան Անոր հրաշալի հարության առաջին ավետաբերները: Խմբովին «Յուդաքեր կիներ» կոչված են ասոնք եկեղեցիի կողմն, որովհետև Միաշաբաթի առափոռ գերեզման փութացին իրենց պատրաստած անուշահոտ յուղերով օծելու համար Քրիստոսի մարմինը:

Ասոնց մեջ ամենեն նշանավորն է ՄԱԿԱՂԵՆԱՅԻ ՄԱՐԻԱՄԸ, Գալիլիո ծովակի եզերքին Մագդալա քաղաքին: Նախապես դիվախար և ջղագար կին մըն էր, որմն Հիսուս «Յո» դներ հանած էր»: Խումբին ամենեն անձնվերը և առաջնորդը կարելի է նկատել զայն: Այս կնոջ անձնվիրությունը վարձատրվեցավ, որովհետև առաջին տեսնողը եղավ հարուցյալ Փրկիչը և հարության ավետիսը առաջին բերողը՝ առաքյալներուն:

Երկրորդը «ՄՅՈՒՍ ՄԱՐԻԱՄ» է, որ ծանոթ է նաև իբրև «ՄԱՐԻԱՄ ՀԱԿՈՒՅԱ և ՀՈՒՍՅԱ ՄԱՅՐ», և որպես «ՄԱՐԻԱՄ ԿՂԵՈՎՊԱ»: Հակոբը և Հովսեփը, որոնց մայր կներկայանա այս Մարիամը, նույնինքն «Տյառնեղբայր» կոչված երիտասարդներն են. իսկ Կղեովպար Մարիամին ամուսինն է: Ուրեմն այստեղ բացահայտ կերևի որ «Տյառնեղբայր» կոչվածները, զորս բողոքականներ կկարծեն որ Հիսուսի հարազատ եղբայրներն են. Մարիամեն և Հովսեփեն ծնած, տարբեր մայր ու տարբեր հայր ունին: Իսկ Հակոբին և իր եղբայրներուն «Տյառնեղբայր» կոչումն այնտեղ է հետևեցնել թե շատ մոտիկ ազգական էին Հիսուսի: Ազգականական այդ կապը չէ ճշդված Ավետարաններուն մեջ: Ամենեն տրամաբանական ավանդությունն այն է, որ Հովսեփ ու Կղեովպաս իրարու եղբայրներ եղած են. որով «Տյառնեղբայրները» Հիսուսի «Հորեղբորորդիներ» կըլլան: Արդարև արևելքի մեջ երկու եղբոր զավակները իրարու եղբայր կհանգցվին, քանի որ կպատկանին նույն ընտանիքին, հաճախ կապրին մեկ և նույն երդիքին տակ, և նույն ընտանեկան մականունը կկրեն:

Յուդաքերներեն անունով ծանոթ երրորդ կինն է ՍՈՂՈՄԵ, Հակոբոս և Հովհաննես առաքյալներու մայրը, և կինը ձկնորսապետ Ջերեղոսի: Հովհաննեսի Ավետարանին մեջ Սողոմն կոչված է «Քույր մոր Նորա» այսինքն Հիսուսի մոր Մարիամին քույրը: Այս բացատրությունը բնականաբար ֆիզիքական իմաստով պիտի չառնվի, այլ՝ բարոյական: Որովհետև Հիսուս իր մայրը հանձնած էր Հովհաննեսի խնամքին, որով

Սողոմն և ս. Կույսը Խաչելութենեն հետո իրենց կյանքի ամբողջ մնացյալ մասը միասին ապրած էին. ուստի իրապես իրարու քույրեր եղան ու այդպես ալ ճանչցվեցան ամենքի կողմն: Ավանդությունը ս. Կույսին և Սողոմնի մեջ ազգականական կապ մըն ալ կուզե տեսնել:

Յուդաքեր կիներու կարգին Ղուկասի Ավետարանին մեջ միայն հիշված է նաև «ՀՈՎՀԱՆՆԱ», և ուրիշներ: Հովհաննես, Հերովդեսի հարյուրապետներեն Քուզայի կինն էր: Այս հարյուրապետը կնոջնացվի այն «քազավորազն»ի հետ, որուն մահվան դուռը հառած որդին թշված էր Հիսուս, «որուն վրա հալատաց ինքը և ամբողջ իր տունը» (Հովհ. Գ 46—54): Ազնվական այս կինը ի նշան երախտագիտության իր ինչքերեն սիրով բաժնի կհաներ Հիսուսի և իր խումբին և որ մյուս կանանց հետ Երուսաղեմ եկած էր:

Ասոնց բոլորին ալ վախճանին կամ այլ գործունեության մասին ոչինչ թված է Նոր Կտակարանին մեջ: Իրենց մասին եղած ավանդություններն ալ այնքան ստույգ և վստահելի չեն երևիր:

Այս ազնիվ կիները, որոնք ամենեն ավելի խոցված զգացին իրենք զիրենք իրենց Վարդապետին խաչելությամբ ու մահովը, միաժամանակ եղան երջանկագույն հոգիները, քանի որ քախտն ունեցան առաջին անգամ տեսնելու իրենց աստվածային Տեղը, մեռելներեն վերստին կյանքի եկած:

Ասոնք խմբովին նեոկա են վերնառան մեջ, Հոգեգալստյան մախորակին, և մաս կկազմեն այն 120 հոգիե թաղկացյալ խումբին, որ կորիզը կազմեց քրիստոնեական եկեղեցիին և որոնք հավաքաբար պուստան ս. Հոգին Պննտկոստեի օրը:

Ասոնց հիշատակը կկատարենք «ՅՈՒՂԱԲԵՐ ԿԻՆԵՐ» հավաքական անվան տակ, Հովակիմա և Աննայի հետ, Վերափոխման տասներորդ օրը: Հույնք՝ Յուդաքեր կիները կհիշատակեն մյ. 23-ին, Մագդալենացին առանձինն՝ հյ. 22-ին, լատինք՝ անջատ-անջատ, Մարիամ Կղեովպան՝ ապրիլ 9-ին: Մագդալենացին՝ հյ. 22-ին: Սողոմեն՝ հոկտ. 22-ին:

32. Հակոբոս Տյառնեղբայր

Հակոբոս այն օղակն է, որ կմիացնե Ավետարանի սուրբերը Գործք Առաքելոցի մեջ հիշված սուրբերուն հետ: Յուդաքեր կիներով դուրս կուզանք Ավետարանի էջերեն և Հակոբոսով կմտնենք Գործք Առաքելոցեն ներս: Հակոբոս թեև հիշված է Ավետարաններու մեջ, քայց ոչ որպես քրիստոնյա գործիչ մը, այլ նախ իբրև մեկը Քրիս-

տուսի «եղբայրներն»: Երկրորդ հիշված է գատորոշելու համար իր Մայրը համաձայն մյուս Մարիամներին: Այնքան նշանակալից է հանրաժանող էր Հակոբոս նախնական եկեղեցիի մեջ, որ իր մայրը կոչված է «Մարիամ Հակոբոս փոքրկան եւ Յովսէպ մայր» (Մրկ. ԺԵ 40): «Փոքր Հակոբ» կոչված էր ան կամ կազմով ու տարիքով փոքր եղած ըլլալուն, և կամ ինչ որ ավելի հավանական է, հարաբերաբար Հակոբոս Ջեբեղյանի, որ ծանոթ էր «Մեծն Հակոբոս» հորջորջումով:

Պետք չէ շփոթել զայն նաև Հակոբոս Ալիլյանին հետ, որ Տասներկուքին էր: Հակոբոսին մայրը կոչված է նաև որպես «Մարիամ Կղեովպա», այսինքն Կղեովպասի կին Մարիամ, որով Հակոբոսի հոր անունն ալ ծանոթ է Ավետարաններին:

Բացահայտ է Ավետարաններն նաև թե «եղբայրները դեռ չէին հավատացած» Հիսուսի (Հովհ. Է 5): Բայց Պողոս առաքյալ կհաստատե, որ Հիսուս հետ հարության հասկապես երևցած է նաև Հակոբոսին (Ա Կորնթ. ԺԵ 7): Այս երևույթը ամենայն հավանականությամբ պատճառ եղած է Հակոբոսի դարձին, որ իր կարգին դարձի բերած պիտի ըլլա նաև մյուս Տյառնեղբայրները, այնպես որ, երբ կ'ստանան Գործք Առաքելոցն ներս, կ'սեան ենք որ ասոնք ալ իսկովին ներկա են վերնատան մեջ առաքյալներու հետ և մաս կկազմեն այն հարյուր քսան հոգիներու, որոնք ս. Հոգին ստացան Հոգեգալստյան օրը (Գործք. Ա 14):

Հակոբոս կհիշվի իբրև նախնական եկեղեցիի գլխավոր գործիչներն մեկը՝ Երուսաղեմի առաքելական ժողովի ընթացքին որուն որոշումը ինք կբանաձևեն (Գործք ԺԵ 13): Քրիստոնեական եկեղեցին իր սկզբնական քայլերուն մեջ առաջացած է Իրկոթներով, զորս մեր այսօրվան քառերով կարելի է կոչել. «ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ և ՀԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ», կամ հրեական ու հեթանոսական հատվածներ: Վերջին այս բառը—հեթանոսական—պետք է հասկնալ իր ազգագրական իմաստով և ոչ՝ քարոյական առումով: Առաջին խումբին պետք Հակոբոսին է, երկրորդինը՝ Պողոս: Պետքու կաշխատի հավասարակշռությունը պահել երկու թևերուն միջև, հաճախ ավելի հակելով հրեական կողմը: Հակոբոսի կողմնակիցները իրենց տեսակետները հաճախ ծայրահեղության տանելով կպահանջեին որ հեթանոսությունն դարձող քրիստոնյաներ ալ պետք է լրիվ պահեն հրեական օրենքները, օրինակ թլփատվին ու ենթարկվին աղբազմաթիվ ծիսական սովորությանց, ինչ որ Պողոս անհրաժեշտ չէր նկատեր: Հակոբոս այս պահանջները նվազագույնի վերածեց

Երուսաղեմի ժողովին մեջ ինչ որ ամենքի կողմն ընդունելության արժանացալ և իբրև հրահանգ ժողովի կողմն դրվեցալ հեթանոսությունն դարձող քրիստոնյաներուն, Անտիոք:

Ավանդությունը Հակոբոսը կհանձնա իբրև առաջին եպիսկոպոսը Երուսաղեմի մայր եկեղեցիին: Ամեն պարագային «Այուններն» մեկն էր առաջին քրիստոնեական եկեղեցիին, Պետրոսի և Հովհաննեսի հետ, ինչպես կհաստատեն Պողոս առաքյալ (Գաղտ. Բ 9):

Հակոբոս հիշված է նաև Հովսեփոս հրեա պատմիչի կողմն իբրև «արդար» մարդ մը, այդ ածականը իր վրա մնացած է իբրև մակդիր: Հայամարտը կհաստատեն որ. «Աստված օրհնեց և սրբացուց զայն իր մոր որովայնեն. զինի և օղի չխմեց Սամվելի մասն. ոչ ալ շնչավոր—մտեղեն—ոնե բան կերալ. ոչ ալ մազերը կտրվեցան, Սամսոնի պես... Եվ անոր ծուկները ուղտի ծուկներուն պես կարծրացած էին հաճախակի ծնրադրությունեն»:

Իր նահատակությունը մանրամասնորեն կպատմվի հին վկայաբանությանց մեջ: Տրված ըլլալով, որ Հակոբոս, քրիստոնյա ըլլալով հանդերձ, մեծ հարգանք կվայելեր նաև հրեից մեջ իր պատվիրանապահության և օրինապահության համար, ուստի օրին մեկը բռնադատեցին զինքը, որ ելնե տաճարի աշտարակը և այնտեղեն հայտաբերություն մը ընե ընդդեմ Հիսուսի, որպեսզի Անոր պատճառով ստեղծված երկվությունը վերնա իրենց ժողովուրդին մեջն: Հակոբոս սակայն հայտարարեց «Հիսուս Մեսիան է և Աստուծո Որդին, որ այժմ նստած է Աստուծո աջ կողմը և պիտի գա դնելու աշխարհը արդարությանը»: Ետեր հավատքի եկան այս հայտարարության վրա. իսկ ուրիշներ վեր ելան ու Հակոբոսը աշտարակե վար նետեցին ու սկսան քարկոծել զայն. ի վերջո անոնցմե մեկը թափիչի խոշոր փայտով մը փշոցեց արդարին գլուխը, որ հոգին ավանդեց առ Աստված 62 թվականին:

Այս Հակոբոսին հիշատակն ալ, Ջեբեղյան Հակոբոսին պես, սերտորեն կապված է մեր եկեղեցիին հետ, նահատակությունն հետո իր մարմինը բերված ու թաղված էր իր տան պարտեզին մեջը, որ թաղված էր նաև Հակոբոս առաքյալի գլուխը: Այս տան տեղվույն վրա շինված է Երուսաղեմի հայոց պատրիարքության մայր տաճարը, որ այս իսկ պատճառով կկոչվի «Սրբոց Հակոբյանց տաճար», այսինքն «Սուրբ Հակոբներու եկեղեցի»:

Նոր Կտակարանի մեջ Հակոբոսի անունով թուղթ մը ունինք ուղղված առ հասա-

րակ հրեա քրիստոնյաներուն: Աշատագովն գործնական կրոնքը, որ կհայտնվի ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ մեջ: Թողթին կեդրոնական գաղափարը կհայտնվի առ խոսքին մեջ. «Եթե մեկը կկարծե որ ինք կրոնասեր է, քայց եթե իր լեզուն չի ասններ, ինք գինքը կկարե, այդ մարդուն կրոնքը ընդունան է: Այն կրոնքը, որ սուրբ և անարատ է Աստուծո և մեր հոր առջև հետևյալն է. այցելող ըլլալ որբերուն և այրիներուն իրենց նեղության մեջ, և անարատ պահել անձը աշխարհին» (Ս. 26—27): Բարի գործերը կհարկադրե հավատքի սուկական խոստովանության. «Ինչպես որ մարմինը առանց հոգիի մեռյալ է, այնպես ալ հավատքը առանց գործքի մեռյալ է» (Բ. 26):

Տյառնեղբայր Հակոբոսի հիշատակը կրկնապես իբրև «Ավագ տոներ»ու առաջինը Դավիթ մարգարեին հետ:

Հուլնք՝ հոկտ. 23: Լատինք՝ մայիս 1:

33. Ծնվումն՝ ազգական Քրիստոսի

Մենք այս անձը պիտի նույնացնենք «Տյառնեղբայրներն» Սիմոնին հետ (Մրկ. 2 3), որուն մասին անունեն գատ ուրիշ ոչինչ գիտենք Նոր Կտակարանեն: Ավանդությունը զայն կնկատե Երուսաղեմի երկրորդ եպիսկոպոսը, հաջորդած՝ Հակոբոսին, և շուրջ հիսուն տարիներ մնացած է այդ պաշտոնին վրա: Իբրև քրիստոնեից պետ հրեաներու կողմն կմատնվի Պաղեստինի հոռվմայեցի կառավարիչին ձեռքը, որ գինքը շարշարանքներու կենթարկե, որոնց զարմանալի համբերությամբ կտոկա. ի վերջո Հիսուսի նման խաչի մահվամբ կնահատակվի խոր ձերության մեջ, ավելի քան հարյուրամյա: Կտոնվի Հիսուսի երրորդ կիրակիին հաջորդող երեքշաբթիին՝ այլ ավետարանական և առաքելական դարս սրբոց հետ:

Հուլնք՝ ապրիլ 27: Լատինք՝ փետր. 17:

34. Ստեփանոս նախավկա

Ստեփանոս նախավկան եկեղեցիի ամենեն շնորհալի դեմքերեն մեկն է. կրկնապես անմահացած՝ ոչ միայն իբրև անոր մեծ գործիչներեն մեկը, այլ նաև հանդիսանալով առաջին քրիստոնյան՝ որ իր արյունը թափած է Քրիստոսի սիրուն համար:

Առաջին անգամ իր անունին կհանդիպենք երբ քրիստոնեական եկեղեցին կրկնապես իր առաջին բնորոշությունը:

Ակզբնական շրջանին նախնական եկեղեցին փորձեց ապրիլ հավաքական կյանք մը: Ունեին հասարակաց զանգանակ և հա-

սարակաց սեղան: Հավատացյալները իրենց ինչքերը կամ ազարակները ծախելով դրամը առաքյալներու տրամադրության տակ կդնեին: Իսկ հասարակաց սեղանին կմասնակցեին ամենքը առանց ուն խառնության: Երբ խումբը մեծցավ՝ սեղան տարբերու հարցը դժվարացավ և բարդություններ ստեղծվեցան: Առաքյալները, որոնք հասարակաց սեղանի հոգն ալ իրենց վրա առած էին, անդադարձան որ այդ արգելք կրկնապես բարոզական ավելի կարևոր գործին. ուստի «Տառնեղբայր կանչեցին աշակերտներու բազմությունը և ըսին. շիտակ չէ որ մենք թողունք Աստուծո խոսքը և սեղանին սպասավորենք: Ընտրեցեք, եղբայրներ, ձեր մեջեն յոթը վաստակելի մարդեր, զորս այս գործին վրա կարգենք, իսկ մենք պաշտամունքի և բարոգության գործերով զբաղինք» (Գործ. 2 1—7):

Հավատացյալները ընտրեցին արդարև յոթը հոգիներ, որոնց առաջինն էր Ստեփանոս: Առաքյալներ առնց վրա «աղոթք ըրին և ձեռք դրին»: Եվ որովհետև առնց պաշտոնն էր հասարակաց սեղանին սպասարկել, կոչվեցան «Սպասավորներ». հույներով «Տիակոս»ներ: Ժամանակի ընթացքին երբ այս նյութական սեղանը փոխարինվեցավ հոգևոր սեղանով, այս վերջին սեղանին սպասավորներն ալ պահեցին նույն տիպոսը և եղան այսօրվան եկեղեցիի Սարկավագները:

Ստեփանոս առաջին վայրկյանն իսկ որակված է «Ս. Հոգիով և հավատքով լեցված» կամ «Ընդլիարով և զորությամբ լեցված մարդ մը», սկսավ մինչև իսկ հրաշքներ գործել: Հասարակաց սեղանի սպասարկութենեն դուրս ժամանակ կհատկացներ նաև բարոզական գործին, որուն մեծ հարմարություն կզգար իր մեջ, ու հատկապես կբարոզեր արտասահմանեն եկած հրեաներուն: Ասոնց հառաջապահները «չկարենալով դիմադրել այն իմաստության և հոգիին, որով կխոսեր», դիմեցին զրպարտական միջոցներու, ամբաստանելով զայն որպես թե «հայհոյական խոսքեր քսած ըլլար Մովսեսի և Աստուծո դեմ». զրգոնցին ժողովուրդը և անոնց մեծամեծները, բռնեցին զայն և իրենց բարձրագույն ատյանին առջև հանեցին, դատելու համար: Ու Գործք Առաքելոցի հեղինակը կավելցնե. «Առաջինն մեջ նաաղոնները երբ իրենց ակնարկները կեդրոնացուցին անոր վրա, տեսան որ անոր դեմքը հրեշտակի երեսին պես էր» (Գործ. 2 15):

Բարձրագույն ատյանի մեջ Ստեփանոսի խոսած ճառը պահված է Գործք Առաքելոցի մեջ—Է գլուխ— որ համադրություն է Հիմ Կտակարանին, որ Ստեփանոս քալ

առ քալ կհաստատեն որ խստապարանոց ժողովուրդ մը եղած են իրենց հայրերը և իրենք, որոնք «սպաննեցին անոնք, որոնք նախապես պատմեցին Արդարի—Մեսիայի, Քրիստոսի—գալստեան մասին, որուն դուք ալ հիմա մատնիչները և սպանիչը եղաք. օրենք ստացաք հրեշտակներու ձեռքով և չպահեցիք զայն»:

Երբ լսեցին ժողովականները այս հանդիմանական խոսքերը զայրույթով լեցվեցան և իրենց «ակուաները կկնրտեին»։ Իսկ Ստեփանոս երբ աչքերը վեր առավ «Տեսավ Աստուծո փառքը և Հիսուսը, որ Աստուծո աջ կողմը կեցած էր»։ ու հայտարարեց. «Ահա կտեսնեմ երկինքը բացված և Մարդու Որդին՝ Աստուծո աջ կողմը կեցած»։ Այս հայտարարութենէն սաստիկ գայթակղած ձևանալով ներկաներ, դերասանական ձևով իրենց ականջները գոցեցին, հարձակեցան Ստեփանոսի վրա, դուրս հանեցին զայն քաղաքէն ու սկսան քարկոծել։ Իսկ Ստեփանոս, որ ամեն մարդի մէջ կատարյալ հետևող մը եղած էր Քրիստոսի, նմանեցավ Անոր նաև մահվամբ, երբ թողու-

թյուն խնդրեց իր քարկոծողներուն համար, ըսելով. «Տեր, ասիկա մեղք մի համարեր ասոնց»։ և ապա «Տեր Հիսուս ընդունե իմ հոգիս», ըսելով «ննջեց»։ Սողոմ—ապագա Պողոսը—անոր սպաննիչներէն մեկն էր։

Ըլլա Ստեփանոսի քարոզը, ըլլա անոր մահը, խոր տպավորություն գործած պիտի ըլլա Սողոմի վրա, որ չկրցավ ազատվիլ անոնց հաճախանքէն, մինչև որ ինք ալ դարձի եկավ և շարունակեց Ստեփանոսի սկսած գործը, որ էր անջատել քրիստոնեությունը հրեական կրոնի կաշկանդումներէն, և տալ անոր ազատական ու համամարդկային ուղղություն մը, որ Պողոսի մեծագույն իրագործումը եղավ արդարև։

Կտոնենք Ստեփանոսի հիշատակը Ավագ տոներու կարգին, դեկտ. 25-ին կամ անոր հաջորդ օրը, երբ դեկտ. 25-ը կիրակի կամ պահոց օր ըլլա։ Հուլնք՝ դեկտ. 27 և օգո. 2։ Լատինք՝ դեկտ. 26, մյս. 7 և օգո. 3։

(Ծարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 171—184)